LIGA INSURANCE

Ավտո +
Ապահովագրության ծրագիր

Ուսումնական ձեռնարկ

Երևան 2024

Հարգելի գործընկեր,

Տվյալ ուսումնական ձեռնարկը նախատեսված է ԼԻԳԱ Ինշուրանս [illegible] ուսումնասիրելու համար:

Ուսումնասիրելով ձեռնարկի նյութերը՝ Դուք պատկերացում կկազմեք Ավտո + [illegible] առանձնահատկությունների մասին:

Ուշադիր ուսումնասիրեք ձեռնարկը և, նյութն ավելի լավ յուրացնելու համար, պատասխանեք յուրաքանչյուր բաժնի վերջում տեղադրված հարցերին:

Ձեր իսկ հարմարության համար կարևոր հատվածները շեշտված կլինեն հետևյալ նշաններով՝

[illegible]

[illegible]

[illegible]

Մաղթում ենք արդյունավետ ուսուցում:

Նախաբան. «Ավտո +» ծրագրում կիրառվող տերմիններ

Ապահովագրության օբյեկտ	Ապահովադրի (Շահառուի) գույքային շահերը, որոնք կապված են Ապահովադրի (Շահառուի) ԱՄ-ի տնօրինման, օգտագործման և տիրապետման հետ և որոնք առաջանում են ԱՄ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացման կամ վնասվելու հետևանքով, և/կամ կապված են ապահովագրված անձի առողջությանը վնաս պատճառելու հետ :
Ապահովագրության պայմանագիր	Ապահովադրի և Ապահովագրողի միջև կնքված փաստաթուղթ է, որում սահմանված են ցամաքային տրանսպորտի ապահովագրության (բացառությամբ երկաթուղային) դասով իրականացվող ապահովագրության պայմանները և Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմանները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ ապահովագրության պայմանագրի/վկայագրի համար նախատեսված պարտադիր այլ պայմանները:
Ապահովագրող	ԼԻԳԱ Ինշուրանս ապահովագրական ընկերություն
Ապահովադիր	Ապահովագրողի հետ Պայմանագիր/Վկայագիր կնքած գործունակ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, հիմնարկ:
Շահառու	Ապահովադրի կողմից Պայմանագրում/Վկայագրում նշված անձ, ով ունի Պայմանագրով/Վկայագրով ապահովագրված ԱՄ-ն պահպանելու հետ կապված գույքային շահ՝ համաձայն ՀՀ օրենսդրության կամ այլ պայմանագրի և իրավունք ունի ստանալու ապահովագրական հատուցում: Իսկ ավտոտրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորի դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում Ապահովագրված անձը, նրա ժառանգ(ներ)ը, ով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ անձի առողջությանը պատճառված վնասի գծով ստացել է ապահովագրական հատուցում:
Ապահովագրված ավտոտրանսպորտային միջոց	Թեթև մարդատար ավտոմեքենա (թափքի տեսակը՝ սեդան կամ կուպե կամ հեչբեք կամ ունիվերսալ), որն ապահովագրված է Պայմանագրով/Վկայագրով:
Ավտոտրանսպորտային միջոց (միջոցներ)	Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր տրանսպորտային միջոց (ներառյալ՝ թեթև մարդատար ավտոմոբիլներ, միկրոավտոբուսներ,

	բեռնատար ավտոմոբիլներ, քարշակներ), որոնք բախվել են ապահովագրված ԱՄ-ին և վերջինիս պատճառվել է վնաս:
Վնաս պատճառած անձ կամ վնաս պատճառող	Անձ, որի գործողությունների (անգործության) հետևանքով ապահովագրված ԱՄ-ին պատճառվել է վնաս, որը հատուցվել է՝ համաձայն ԱՊՊԱ օրենսդրության:
Ապահովագրավճար	Ապահովագրական ծառայության արժեքը, որը հաճախորդը վճարում է ապահովագրական ընկերությանը:
Ապահովագրական գումար	Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից Տուժողին վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափ:
Ագրեգատային ապահովագրական գումար	Գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում բոլոր ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում: Ընդ որում, ապահովագրական գումարը յուրաքանչյուր ապահովագրական հատուցման վճարումից հետո նվազում է տվյալ հատուցման գումարի չափով:
Ապահովագրական սակագին	Ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի նկատմամբ, որը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը:
Ապահովագրավճարի հերթական մասի վճարում	Ապահովագրավճարի տարաժամկետ վճարում նախատեսող Պայմանագրի/Վկայագրի գծով մասերով կատարվող վճարումներ, որոնց չափերը և վճարման ժամկետներն Ապահովագրողի կողմից սահմանվում են Պայմանագրում/Վկայագրում:
Ոչ պայմանական չհատուցվող գումար	Պայմանագրում/Վկայագրում սահմանված վնասի չափ, որը ենթակա չէ հատուցման Ապահովագրողի կողմից՝ անկախ վնասի չափից: Փոխհատուցվող վնասը նվազեցվում է ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում:
Ապահովագրական ռիսկ՝	Ենթադրվող իրադարձություն, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է Պայմանագիրը/Վկայագիրը:
Ապահովագրական պատահար	Պայմաններով նախատեսված և տեղի ունեցած իրադարձություն, որի տեղի ունենալու հիմքում ընկած է պատահականության բնույթը և որի արդյունքում Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրված ԱՄ-ին պատճառվել է գույքային վնաս, ինչն առաջացրել է Ապահովագրողի՝ Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու պարտականություն:
Ապահովագրական	Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում

հատուցում	Ապահովագրողի կողմից Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրական գումարի սահմաններում Տուժողին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով կամ վնասված գույքի վերանորոգմամբ:
ԱՄ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացում	ԱՄ-ի կոնստրուկտիվ ոչնչացում, երբ ԱՄ-ի վերանորոգման, վերականգնման արժեքը (ներառյալ՝ Պայմանագրով/Վկայագրով հատուցման ենթակա ծախսերը) գերազանցում է ԱՄ-ի իրական (ապահովագրական) արժեքի 80%-ը (ութսուն տոկոսը):
Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով ԱՄ-ին պատճառված վնաս	ավտոտրանսպորտային միջոցով ապահովագրված ԱՄ-ին պատճառված գույքային վնաս ԱՄ-ի և այլ ավտոտրանսպորտային միջոցի բախման արդյունքում՝ վերջիններից ցանկացածի կամ բոլորի շարժիչների գործադրմամբ կամ առանց դրա:
ԱՄ-ի վնաս կամ ոչնչացում	ԱՄ-ին պատճառված ֆիզիկական վնաս կամ դրա ոչնչացում՝ Պայմաններով նախատեսված ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում:
Ապահովագրության ժամկետ	այն ժամկետն է, որի ընթացքում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների /դրանց հետևանքների արդյունքում առաջացած վնասների համար Ապահովագրողը փոխհատուցում կատարելու պատասխանատվություն է կրում:
Ապահովագրության տարածք	այն տարածքն է, որի սահմաններում գործում է ապահովագրությունը:

«Ավտո +» ծրագիր

Պրոդուկտի հակիրճ նկարագիր

Ավտո+ պրոդուկտը ԿԱՍԿՈ պրոդուկտի ավելի մատչելի տարբերակն է (առանց առևանգման և տարերային աղետներ ռիսկերի), որը նախատեսված է ԱՊՊԱ պայմանագրով Տուժող կողմ հանդիսացող մեքենայի սեփականատիրոջ համար:

Ինչն ենք ապահովագրում

Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում գույքային շահերը, որոնք կապված են

- Ապահովադրի (Շահառուի) ԱՄ-ի տնօրինման, օգտագործման և տիրապետման հետ և որոնք առաջանում են ԱՄ-ի ամբողջական ոչնչացման կամ վնասվելու հետևանքով,
- և/կամ կապված են ԱՄ-ի օգտագործման ընթացքում առաջացած ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովագրված անձի առողջությանը վնաս պատճառելու հետ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Ավտո + ծրագիրը հնարավոր է կնքել միայն այն անձանց հետ, ովքեր ԼԻԳԱ Ինշուրաս ԱՓԲԸ հետ ունեն գործող ԱՊՊԱ պայմանագիրը: Առանց ԱՊՊԱ պայամանգրի, Ավտո + պայմանագիր կնքելը արգելվում է:

Ինչ ԱՄ-ի համար է նախատեսված պրոդուկտը

- Ավտո+ ծրագիրը նախատեսված է ընդհանուր օգտագործման ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրող ԱՄ-ի համար, այդ թվում՝ թեթև մարդատար ավտոմեքենաներ, միկրոավտոբուսներ, բեռնատար ավտոմեքենաներ, քարշակներ:

Ապահովագրման ենթակա չեն

Որոշակի վճարի դիմաց ուղևորներ տեղափոխելու նպատակով օգտագործվող ԱՄ-ները:

Ապահովագրության չեն ընդունվում մինչև 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող ԱՄ-ը և 40, 000, 000 (40 միլիոն) ՀՀ դրամից ավելի շուկայական արժեք ունեցող ԱՄ-ը: Ինչպես նաև Ապահովագրության չեն ընդունվում 15 տարին գերազանցող ԱՄ-ները:

Ով կարող է լինել ապահովադիր, ապահովագրված անձ, շահառու

Ավտո+ ծրագրով Ապահովադիր կարող է լինել ցանկացած ֆիզիկական, իրավաբանական անձ, ով օրինական հիմքով տիրապետում է ԱՄ-ն և ԼԻԳԱ Ինշուրանս ԱՓԲԸ-ի հետ ունի գործող ԱՊՊԱ պայմանագիր:

Ապահովագրված անձ կարող է լինել ԱՄ-ի սեփականատերը, ինչպես նաև օրինակ հիմքով այն տիրապետող այլ անձ (ներառյալ վարորդը և ուղևորները):

Շահառու կարող է լինել ԱՄ-ի ապահովագրության դեպքում Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրում նշված անձ, ով ապահովագրության պայմանագրով ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցը պահպանելու հետ կապված ունի գույքային շահ՝ համաձայն ՀՀ օրենսդրության կամ այլ պայմանագրի, և ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի գծով ստացել է ապահովագրական հատուցում:

Ինչն է համարվում ապահովագրական պատահար

Պատահարը համարվում է ապահովագրական, եթե՝

- ✓ Վնասը պատճառվել է ապահովագրված ԱՄ-ին այլ մեկ և ավելի ավտոտրանսպորտային միջոցների հետ բախման հետևանքով
- ✓ Բախման հետևանքով տեղի է ունեցել ԱՄ-ի վնասում կամ մասնակի/լրիվ ոչնչացում
- ✓ Վնասը պատճառվել է Ապահովագրված անձի առողջությանը
- ✓ Շահառուն ԱՊՊԱ օրենսդրության

համաձայն հանդիսանում է Տուժող

- ✓ Շահառուն ստացել է ԱՊՊԱ հատուցում

Ապահովագրության ժամկետ

ԱՎՏՈ + պայմանագիրը կնքվում է միայն 365 օր ժամկետով:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՍԿՍՈՒՄ Է ԳՈՐԾԵԼ՝

- Պայմանագրի կնքման ամսաթվին հաջորդող օրվա ժամը 00:00-ից:

Օրինակ՝

[redacted] 07.08.2020 թ-ի. ժ. 23:59-ն:

Ապահովագրության տարածք

ԱՎՏՈ + պայմանագիրը գործում է ՀՀ տարածքում:

Ապահովագրական գումար և ոչ պայմանական չհատուցվող գումար

Ըստ Ավտո+ ծրագրի շրջանակներում՝

1. ապահովագրական գումարը յուրաքանչյուր ապահովագրված ԱՄ-ին պատճառված վնասի գծով կազմում է 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամ,
2. ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով՝ 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամ,
3. պայմանագրով ապահովագրական գումարը բոլոր Ապահովագրված անձանց առողջությանը պատճառված վնասների հանրագումարի գծով սահմանվում է 36,000,000 (երեսունվեց միլիոն) ՀՀ դրամ:

Պայմանագրում սահմանվում է ագրեգատային ապահովագրական գումար: Այսինքն՝ ապահովագրական գումարը նվազեցվում է վճարված ապահովագրական հատուցման չափով:

8.1 .Ոչ պայմանական չհատուցվող գումար

Ավտո+ ծրագրում սահմանված է ոչ պայմանական չհատուցվող գումար:

Ոչ պայմանական չհատուցվող գումար (Ֆրանշիզա)՝ վնասի չափ, որը ենթակա չէ հատուցման Ապահովագրողի կողմից և յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում նվազեցվում է փոխհատուցվող վնասից:

Ավտո+ ծրագրի շրջանակներում ոչ պայմանական չհատուցվող գումարը կազմում է ԱՊՊԱ օրենսդրությամբ անձնական և գույքային վնասների համար սահմանված ապահովագրական գումարների առավելագույն սահմանաչափերը:

ԱՊՊԱ օրենսդրությամբ ապ.գումարի առավելագույն սահմանաչափերն են՝

Մեկ ապահովագրական պատահարի հետևանքով յուրաքանչյուր տուժողին պատճառված վնասներիգծով՝

1) անձնական վնասների համար՝ 3 300 000 ՀՀ դրամ,
2) գույքին պատճառված վնասների համար՝ 1 800 000 ՀՀ դրամ:

Մեկ ապահովագրական պատահարի հետևանքով բոլոր տուժողներին պատճառված վնասների հանրագումարի գծով՝

1) անձնական վնասների համար՝ 33 000 000 ՀՀ դրամ,
2) գույքին պատճառված վնասների համար՝ 18 000 000 ՀՀ դրամ՝

Այսպիսով՝ Ոչ պայմանական չհատուցվող գումարը մեկ ապահովագրական պատահարի հետևանքով յուրաքանչյուր Ապահովագրված անձին պատճառված վնասների գծով կազմում է.

ա/ ապահովագրված ԱՄ-ին պատճառված վնասի գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ:
վճարված հատուցման գումարը, բայց ոչ ավել քան յուրաքանչյուր ապահովագրված անձի գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված ապահովագրական գումարը

բ/ ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ վճարված հատուցման գումարը, բայց ոչ ավել քան յուրաքանչյուր ապահովագրված անձի գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված ապահովագրական գումարը:

գ/ մեկ ապահովագրական պատահարի հետևանքով բոլոր Ապահովագրված անձանց առողջությանը պատճառված վնասների հանրագումարի գծով սահմանվում է ԱՊՊԱ օրենսդրությամբ բոլոր Ապահովագրված անձանց գծով սահմանված ապահովագրական գումարը:

<u>Օրինակ</u>

Շղթայական վթարի դեպքում, հնարավոր է ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված ապահովագրական գումարը չբավականացնի Ապահովադրի (Ապահովագրված անձի, շահառուի) վնասները ամբողջությամբ հատուցելու համար, այդ դեպքում Ապահովագրողը կհատուցի այն տարբերությունը, որ կմնա ԱՊՊԱ պայմանագրով ստացած հատուցումից հետո:

Բ. Գրիգորյանի շղթայական ՃՏՊ-ի արդյունքում ստացած գույքային վնասը կազմել է 1 000 000 ՀՀ դրամ և նա ճանաչվել է տուժող կողմ: Տուժողների մեծ քանակի հետևանքով նա ստացել է 750 000 ՀՀ դրամ:
Այսինքն՝նա ամբողջությամբ չի ստացել վնասի հատուցումը:
Ըստ Ավտո+ ծրագրի նա իրավունք ունի ստանալ հատուցում, սակայն ոչ պայմանական չհատուցվող գումարի կիրառմամբ: Եվ քանի որ ոչ պայմանական չհատուցող գումարը

կազմում է ըստ ԱՊՊԱ օրենսդրության վճարված գումարը և այն չի կարող գերազանցել ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված առավելագույն գումարը, հետևաբար նա Ավտո+ ծրագրի շրջանակներում կստանա՝

1 000 000 ՀՀ դրամ (վնաս) – 750 000 ՀՀ դրամ (ԱՊՊԱ հատուցում)= 250 000 ՀՀ դրամ (Ավտո+ ծրագրի շրջանակներում հատուցում):

9. Ապահովագրավճար

Ապահովագրավաճարը ենթակա է վճարման կանխիկ և անկանխիկ տարբերակներով:

Ֆիզիկական անձ Ապահովադիրների հետ կնքվող Պայմանագրերով ապահովագրավճարն ամբողջությամբ (միանվագ) պետք է փաստացի վճարվի Պայմանագրի կնքման պահին:

Ապահովագրավճարների աղյուսակ

Մեքենայի արժեք (մլն. դրամ)	Ապահովագրավճար
3-5 նեռարյալ	8,000 ՀՀ դրամ
5-10 նեռարյալ	11,000 ՀՀ դրամ
10-20 նեռարյալ	13,000 ՀՀ դրամ
21 - 40 (ներառյալ)	16,000 ՀՀ դրամ

Ուշադրություն.

Պայմանագրի կնքման պահին ԱՄ-ի զննում կարող է չիրականացվել և մեքենայի շուկայական արժեքը որոշելիս հիմք ընդունել Ապահովադրի կողմից տրված բանավոր տեղեկատվությունը:

10. Հատուցման մերժման հիմքեր

Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց հետո սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին չտեղեկացնելը,
2. սահմանված ժամկետում Ապահովագրողին դիմելու կարգը խախտելը, անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնելը կամ թերի և ոչ արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելը,
3. Ապահովադրի (Շահառուի) կողմից վնասը պատճառած անձից արդեն իսկ հատուցում ստանալը,
4. պայմանագրում նշված ԱՄ-ի վարորդի ալկոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո գտնվելը ապահովագրական պատահարի պահին,

5. պայմանագրում նշված ԱՄ-ին վնասելը մրցույթներում, փորձարկումներում, ուսումնական նպատակներով օգտագործման արդյունքում,
6. պատահարի տեղի ունենալը դիտավորյալ գործողությունների արդյունքում (Ապահովագրված անձի, Շահառուի),
7. ապահովագրման ոչ ենթակա մեքենաների հետ տեղի ունեցած պատահարները
8. ԱՄ-ն որոշակի վճարի դիմաց ուղևորներ տեղափոխելու նպատակով օգտագործելը,,
9. ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների թաքցնելը Ապահովագրողից,
10. պատահարում Ապահովադրի (շահառուի) ոչ դիտավորյալ մեղքի առկայությունը, որի համաձայն ԱՊՊԱ օրենսդրությամբ հատուցումը նվազեցվել է տվյալ Շահառուի գույքային պատճառված վնասների
    ա/ 100%-ի չափով, եթե վերջինս տվյալ պատահարում միակ մեղավորն է,
    բ/ 50%-ի չափով, եթե պատահարում առկա է նաև այլ անձանց մեղքը,
11. եթե ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության գծով ապահովագրական հատուցման վճարումն ԱՊՊԱ օրենսդրության համաձայն Ապահովագրողի կողմից ենթակա է մերժման, ապա տվյալ իրադարձության հետևանքով առաջացած վնասը Պայմանագրով հատուցման ենթակա չէ,
12. հատուցման ենթակա չեն ապահովագրական պատահարի ժամանակ ԱՄ-ում գտնվող իրերին և/կամ սարքավորումներին պատճառված վնասը,
13. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք չունի պահանջել ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար, եթե մինչև մտածելու ժամանակի ավարտը, ծանուցել է Ապահովագրողին Պայմանագիրը լուծելու մասին:
14. Ինչպես նաև ստորև բերված կետերը՝
- բարոյական վնաս, բաց թողնված օգուտ, պարապուրդ, կորցրած աշխատավարձ,
- այլ անուղղակի վնասներ, ծախսեր, օրինակ՝ տուգանքներ, ապ.պատահարի կարգավորման ընթացքում հյուրանոցում բնակվելը, գործուղման ծախսեր, հեռախոսային խոսակցությունների ծախսեր և այլն:

11. Ապահովագրական հատուցման վճարման ընթացակարգը

Եթե դեպքը ճանաչվում է ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո, Ապահովադիրը (Ապահովագրված անձը/Շահառուն) իրավունք ունի հատուցում ստանալ՝

ա/ գույքին պատճառված վնասները հատուցվում են գույքին պատճառված վնասների հատուցման գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված տրամաբանությամբ

բ/ ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով հատուցվում են Ապահովագրված անձի առողջությունը վերականգնելու նպատակով կատարվող բժշկական ծախսերը՝ այն դեպքում, երբ Ապահովագրված անձը ներկայացնում է առողջությանը պատճառված վնասների գծով ԱՊՊԱ օրենսդրությամբ սահմանված ապահովագրական գումարի սպառված լինելը հավաստող փաստաթղթեր:

[illegible]
հատուցումը վճարվում է անմիջապես բժշկական հաստատությանը:

Ուշադրություն.

Եթե պայմանագրով նախատեսված պատահարի հետևանքով Շահառուների առողջությանը պատճառված վնասները գերազանցում են բոլոր Ապահովագրված անձանց առողջությանը պատճառված վնասների գծով սահմանված ապահովագրական գումարը, ապա Ապահովագված անձանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցում վճարվում է վնասների ընդհանուր գումարում նրանց առողջությանը պատճառված վնասների չափերին համամասնորեն:

12. Սուբրոգացիա; վնասի հատուցման պահանջի իրավունքն ապահովադրից ապահովագրողին անցնելը

Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի Վնաս պատճառած անձի նկատմամբ, անցնում է ապահովագրական հատուցումն իրականացրած Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի սահմաններում:

13. Հաճախորդի քայլերն ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում

Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Հաճախորդը պարտավոր է.

1. Պատահարի տեղի ունենալուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում հայտնել այդ մասին Ապահովագրողին՝ զանգահարելով (012) 888 888 հեռախոսահամարով, հայտնել կոնտակ-կենտրոնի աշխատակցին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և հետևել նրա ցուցումներին:

2. Ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու համար՝ հետևելով Ապահովագրողի ցուցումներին:

3. Չլքել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության վայրը, սպասել Ապահովագրողի ներկայացուցչին (եթե Ապահովագրողն Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և չտեղաշարժել Պայմանագրում նշված ԱՄ-ն:

Ուշադրություն. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) կարող է չսպասել Ապահովագրողի ներկայացուցիչն, եթե վերջինս տեղեկացրել է, որ չի մոտենալու պատահարի վայր:

14. Հայտերի կարգավորման ընթացակարգ

Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Շահառուն) պետք է սահմանված կարգով գրավոր դիմում ներկայացնի Ապահովագրողին հետևյալ ժամկետներում՝

- ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու և ԱՊՊԱ օրենսդրության համաձայն հատուցում ստանալու օրվանից,

- Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասների գծով ԱՊՊԱ օրենսդրության համաձայն առաջին հատուցումը ստանալու օրվանից սկսած՝ ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

Հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Շահառուն) դիմումին կից պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

անձը հաստատող փաստաթղթի բնօրինակ

ԱՄ-ին պատճառված վնասի հատուցման գծով՝ դրա նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակ,

Ապահովագրական պատահարի վայրում իրականացված լուսանկարները և/կամ տեսանյութերը (առկայության դեպքում),

ԱՊՊԱ օրենսդրության համաձայն՝ տվյալ պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնող փորձագետի եզրակացություն կամ դրան հավասարեցված այլ փաստաթուղթ,

ստացված վնասվածքների վերաբերյալ եզրահանգում պարունակող դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտի (եզրակացության) բնօրինակ,

ամբուլատուր բժշկական օգնության դեպքում՝ ամբուլատոր քարտից քաղվածքի և/կամ բժշկական տեղեկանքի և/կամ կոնսուլտացիոն թերթիկի և/կամ բժշկի եզրակացության բնօրինակ,

ստացիոնար բժշկական օգնության դեպքում՝ ստացիոնար քարտից քաղվածքի (էպիկրիզ) բնօրինակ և հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման ձևի (ձև 0001) բնօրինակներ,

բուժհաստատությունում կամ այլ միջոց (օրինակ՝ դեղօրայք, անվասայլակն և այլն) ձեռք բերելու համար վճարման հաշվի (հաշիվ-ապրանքագրի) և հետևյալ փաստաթղթերից որևէ մեկի՝ դրամարկղային ֆիսկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր կամ բանկային փոխանցման անդորրագիր կամ վճարման փաստը հավաստող այլ փաստաթղթերի բնօրինակ:

Շահառուի կողմից ԱՊՊԱ օրենսդրության համաձայն ստացած ապահովագրական հատուցման չափը և ստացման փաստը հաստատող փաստաթղթերի լուսապատճեններ:

15. Վնասների կարգավորման ժամկետները

Ապահովագրական պատահարի տեղի ունենալու ց և Ապահովադրի (Ապահովագրված անձի,Շահառուի) կողմից հայտային դիմումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո Ապահովագրողը որոշում է կայացնում հատուցման վճարման, մերժման կամ նվազեցման մասին:
Որոշման կայացման և իրականացման ժամանակացույցը ստորև `



[illegible]

1. [illegible]
2. [illegible]
3. [illegible]
4. [illegible]
5. [illegible]
6. [illegible]
7. [illegible] ստանալու համար:
8. [illegible] ապահովագրական պատահար տեղի ունենալու մասին:
9. [illegible]